

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՇՈՏԻ

ԼԻԲԱՆԱՆԻ ԴՐՈՒՋԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ (1920-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1990Թ.)

Է. 00. 02 - «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսությամբ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Փոլադյան Ա.Պ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Բայբուրդյան Վ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու  
Վարդանյան Գ.Կ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը տեղի կունենա 2012 թ. դեկտեմբերի 27-ին,  
Ժ.13<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի  
006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում  
(հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. նոյեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու

Ղազարյան Ռ.Պ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### 1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մերձավոր Արևելքում, այդ թվում նաև Լիբանանում, բնակվող էթնոդավանական համայնքների շարքում իր յուրահատուկ դերակատարումն ունի դրուզական համայնքը: Լիբանանի ներքաղաքական զարգացումներում դրուզական համայնքի դերի ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական և գործնական նշանակություն:

Ներկայումս Մերձավոր Արևելքում դրուզական համայնքներ գոյություն ունեն Լիբանանում, Սիրիայում, Իսրայելում և Չորդանանում: Դրուզական համայնքները դարերի ընթացքում քիչ են ենթարկվել փոփոխությունների և համարվում են տարածաշրջանի ամենափակ կրոնադավանական խմբերից մեկը: Դա է նաև պատճառը, որ դրուզական կրոնական ուսմունքը համեմատաբար քիչ է ուսումնասիրված:

11-րդ դարում Ֆաթիմյան Եգիպտոսում իսմայիլականությունից սերված դրուզական կրոնական ուղղության հետևորդներն ավելի ուշ հաստատվեցին Սիրիայում և Լիբանանում, որտեղ գլխավորապես լեռնային շրջաններում հիմնեցին իրենց բնակավայրերը: Ժամանակի ընթացքում դրուզները դարձան այդ երկրների էթնոդավանական կառուցվածքի կարևոր բաղադրիչներից մեկը: Պատահական չէ, որ նորագույն շրջանում այս համայնքն իր էական դերակատարությունն ունեցավ ինչպես սիրիացիների և լիբանանցիների ֆրանսիական մանդատային իշխանության դեմ պայքարում, այնպես էլ արդեն անկախ Սիրիայի և Լիբանանի ներքաղաքական, մշակութային, հասարակական և սոցիալ-տնտեսական գործընթացներում:

Առանց դրուզական գործոնի ուսումնասիրման դժվար է ամբողջական պատկերացում կազմել Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգի ու նրանում ժամանակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Ուսումնասիրվող շրջանում լիբանանյան դրուզական համայնքի գործունեությունը գլխավորապես կապված էր համայնքի ազդեցիկ ղեկավար Քամալ Ջունբլաթի հետ, ով նաև մեծամասամբ դրուզներից կազմված Առաջադիմական սոցիալիստական կուսակցության (ԱՍԿ) հիմնադիրն էր: 1950-ականների վերջին և 1960-ականներին Լիբանանում ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացներն ակտիվացրին նաև դրուզական համայնքին, որը Քամալ Ջունբլաթի գլխավորությամբ սկսեց պայքարել կրոնադավանական համակարգի շրջանակներում նաև դրուզների լիազորությունների մեծացման համար:

Վերոնշյալ թեմայի արդիականությունը կապված է նաև Լիբանանի քաղաքացիական երկրորդ պատերազմի տարիներին (1975-

1990թթ.) դրուզական համայնքն ու այն ներկայացնող ԱՍԿ-ի գործունեության հետազոտման հետ, որը լիբանանյան ծախս ուժերի կարևոր բաղադրիչներից էր, իսկ Քամալ Ջունբլաթը՝ «Ազգային ճակատի» ղեկավարը: Լիբանանյան երկարատև քաղաքական ճգնաժամի ողջ ընթացքում Քամալ Ջունբլաթը, իսկ 1977թ.-ից հետո նաև նրա որդին՝ Վալիդ Ջունբլաթը պաղեստինյան զինված խմբավորումների, ապա նաև շիական «Ամալ» և «Հիզբալլահ» շարժումների հետ պայքարում էին երկրից իսրայելյան զորքերի դուրս բերման, ինչպես նաև կրոնադավանական համակարգում բարեփոխումների իրականացման համար, որոնց նպատակը երկրի քրիստոնյաների՝ հատկապես մարոնիների գերակա դիրքերի վերացումն էր:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Լիբանանում դրուզական գործոնի ուսումնասիրությունը նպաստում է նաև ներկա փուլում երկրում ընթացող զարգացումներում դրուզ ղեկավար Վալիդ Ջունբլաթի ու ԱՍԿ-ի դերի, ինչպես նաև ներդրուզական հակասությունների ավելի ճիշտ ընկալմանը:

Թեմայի ուսումնասիրությունը օգնում է նաև մերձավորարևելյան հակամարտության որոշ ծալքերի առավել ընդգրկուն պատկերացմանն ու այդ հակամարտության սրման արդյունքում Մերձավոր Արևելքի տարբեր պետություններում տվյալ դեպքում Լիբանանում խորացող կրոնադավանական հակասությունների ճիշտ ըմբռնմանը:

Սույն թեմայի արդիականության հարցն ուղղակիորեն պայմանավորված է նաև մերձավորարևելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կարևոր գործընկերներից մեկի Լիբանանի Հանրապետության կրոնադավանական կառուցվածքի և նրանում բնակվող տարբեր համայնքների ուսումնասիրման կարևորությամբ:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է 1920-ականներից մինչև 1990թ. Լիբանանի հասարակական-քաղաքական կյանքում դրուզական համայնքի դերակատարման ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Տարբեր հետազոտությունների օգտագործմամբ՝ հետազոտել դրուզական կրոնական ուսմունքի առանձնահատկությունները:
- Հետազոտել ֆրանսիական մանդատի շրջանում (1920-1946թթ.) Սիրիայի և Լիբանանի դրուզական համայնքների կարևոր դերակատարումն այդ երկրների ազգային ազատագրական պայքարում:

- Դիտարկել Լիբանանի կրոնադավանական համակարգն ու դրա համատեքստում դրուզական հայմայնքի դերն ու գործունեությունը:
- Ուսումնասիրել 1958թ. Լիբանանի քաղաքացիական առաջին պատերազմի ընթացքում երկրի դրուզական համայնքի ու նրա ղեկավար Քամալ Ջունբլաթի գործունեությունը՝ երկրի նախագահ Քամիլ Շամունի վարչակարգի դեմ պայքարում:
- Բացահայտել Ֆուադ Շիհաբի (1958-1964թթ.) և Շարլ Յելուի (1964-1970թթ.) նախագահության տարիներին Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումներում դրուզական գործունի դերակատարումը:
- Քննության ենթարկել Լիբանանի ներքաղաքական կյանքում պաղեստինյան գործունի ակտիվացման գործընթացը (1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին) և հիմնականում դրուզներից բաղկացած Առաջադիմական սոցիալիստական կուսակցության և Պաղեստինի Ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) միջև համագործակցությունը:
- Յետագոտել 1975-1990թթ. Լիբանանի քաղաքացիական երկրորդ պատերազմի ընթացքում դրուզական համայնքի գործունեությունը, որը «Ազգային ճակատում» համախմբված երկրի ձախ շրջանակների հիմնական կրոնաքաղաքական ուժերից էր:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման «Լիբանանի դրուզական համայնքի դերը երկրի ներքաղաքական զարգացումներում (1920-ականներից մինչև 1990թ.)», ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության առարկա: Թեև դրուզների միջնադարյան պատմության, ինչպես նաև Լիբանանի նորագույն պատմության ու ներքաղաքական զարգացումների որոշ ասպեկտներ քննարկվել են հայ և օտարազգի հեղինակների կողմից, սակայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լիբանանի դրուզական համայնքի ամբողջական ուսումնասիրությունը դեռևս չի ներկայացվել առանձին աշխատանքով:

Արևելագետական ուղղվածություն ունեցող ուսումնասիրություններում սովորաբար առաջնահերթությունը տրվել է նոր ժամանակներում դրուզ-մարոնիական հակամարտության ուսումնասիրությանը, իսկ նորագույն շրջանի մասնագետները՝ 1939-1958թթ. Լիբանանում ազգային-ազատագրական պայքարի, 1958թ. Լիբանանում բռնկված առաջին քաղաքացիական և 1975թ. բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմների գիտական քննությանը:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին

համապարփակ ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել համակողմանի վերլուծության ենթարկել ուսումնասիրվող շրջանում Լիբանանի ներքաղաքական զարգացումներում դրուզական համայնքի դերակատարումը:

Գիտական նորույթ է առենախոսության էջերում ուսումնասիրվող ժամանակահատվածում Մերձավոր Արևելքում՝ այդ թվում նաև Լիբանանում, դրուզների ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը:

#### 4. ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով առենախոսությունն ընդգրկում է 1920-ականներից մինչև 1990թ. ժամանակահատվածը՝ 1920-ականների սկզբին Լիբանանում ֆրանսիական մանդատի հաստատումից մինչև 1990թ., երբ երկրում ավարտվեց երկրորդ քաղաքացիական պատերազմը, որի ընթացքում դրուզներն, իրավամբ, որոշիչ դերակատարում ունեին երկրի ներքաղաքական գործընթացներում:

#### 5. ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Առենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են 1920-ականներից մինչև 1990թ. Լիբանանի ներքաղաքական զարգացումներում դրուզական համայնքի գործունեության հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության և փաստերի համեմատական–համադրական վերլուծության սկզբունքները, որոնք զուգորդվում են ուսումնասիրվող ժամանակահատվածում Լիբանանի քաղաքական, սոցիալ–տնտեսական իրավիճակի, կրոնադավանական համակարգով պայմանավորված խնդիրների, տարածաշրջանային իրադարձությունների հետազոտությամբ:

#### 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն առենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել Լիբանանի և առհասարակ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների էթնոդավանական խնդիրների և համայնքների ուսումնասիրությանը նվիրված հետազոտություններում ու դասախոսություններում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել նաև պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև ծառայել Լիբանանի և մերձավորարևելյան տարածաշրջանի այլ երկրների ու նրանցում առկա կրոնադավանական հիմնախնդիրների

նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական մոտեցումների ճշգրտմանը:

## 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում, նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Հեղինակի հրատարակած հիմնադրույթների ու հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

## 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրվել է հայերեն, արաբերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով՝ տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հուշերը, հայտարարությունները, ինչպես նաև պարբերականները:

Մերձավոր Արևելքում դրուզների ժողովրդագրական տվյալների հետազոտման տեսանկյունից օգտակար են եղել արևմտյան հետազոտողներ Ռ. Բրենտոնի, Ն. Բուրոնի, Ջ. Չամիի, Ա. Չաբրիի և այլոց հետազոտությունները<sup>1</sup>:

Դրուզական կրոնական ուսմունքի առանձնահատկությունների հետազոտմանը մեծապես նպաստել է Իսլամի հանրագիտարանը<sup>2</sup>, ինչպես նաև Ֆ. Հիթիի, Ռ. Բրենտոնի, Մ. Մոկարեմի, Չ. Չարչիլի, Աբու Իվեդիմի և Մ. Նաջլանայի, Գ. Բեն-Դորի, Ե. Բլատավսկայայի, Ֆ. Ղաֆթարիի և այլոց աշխատությունները<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Robert Brenton Betts, *The Druze*, Yale University Press, 1988, A. Chabry, *Politique et Minorites au Proche-Orient*, Paris, 1984, J. Chamie, *Religion and Fertility-Muslim-Christian Differentials*, London, Cambridge University Press, 1981, N. Bouron, *Les Druzes: Histoire du Liban et de la Montagne Haouranaise*, Paris, 1930.

<sup>2</sup> *The Encyclopaedia of Islam*, edited by B. Lewis, Ch. Pelat and J. Chacht, vol 2, Leiden, 1983.

<sup>3</sup> Ph. Hitti, *The History of Arabs from the Earliest Times to the Present*, New York, D. Van Nostrand Company, 1961, Robert Brenton Betts, *The Druze*, Yale University Press, 1988, M.F. Mokarem, *Mo'wahedoon Druze*, London, 2000, Ch. H. Churchill, *The Druzes and Maronites under Turkish Rule from 1840 to 1860*, London, 1862, Abu-Izzedin, M.Nejla, *The Druzes: A New Study of their History, Faith and Society*, Leiden, E.J. Brill, 1984, G. Ben-

Ուսումնասիրվող շրջանում Լիբանանի հասարակական-քաղաքական գարգացումներում դրուզական համայնքի դերի լուսաբանման հետ առնչվող մի շարք հիմնախնդիրների հետազոտմանը մեծապես նպաստել են Լիբանանի ականավոր քաղաքական դրուզ գործիչ Քամալ Ջունբլաթի, ինչպես նաև վերջինիս գործունեությանը նվիրված աշխատությունները<sup>4</sup>:

Ուսումնասիրության համար աղբյուր են ծառայել նաև Լիբանանի Հանրապետության սահմանադրությունը<sup>5</sup>, պաղեստինյան հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի պաշտոնական հրատարակումը<sup>6</sup>, Պաղեստինին վերաբերող Միջազգային փաստաթղթերի ժողովածուն<sup>7</sup>, ԽՍՀՄ կառավարության արաբական երկրներին և մերձավորարևելյան հակամարտությանն առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուները<sup>8</sup>:

Մյուս կարևոր աղբյուրը լիբանանյան և արաբական զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է նշել արաբալեզու «Ալ-Նահարը», «Ալ-ահրարը», «Ալ-Նիդան», «Ալ-ախբարը», «Ալ-բասսը», ֆրանսալեզու «L'Оրիան-Լը ժուրը» և այլն, որոնցում տեղ են գտել Լիբանանի նախագահների, կառավարությունների և պետական բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները:

Առենախոսության մեջ արժարժվող տարբեր հիմնախնդիրների լուսաբանմանը մեծապես նպաստել է հայ արաբագետ Ն. Հովհաննիսյանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի, հատկապես, Լիբանանի պատմության տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները<sup>9</sup>:

---

Dor, The Druzes in Israel, Jerusalem: The Magness Press, Hebrew University, 1979, E.II.

Блатавская, Ламы и друзы, 1975, Ф. Дафтари, Краткая история исламизма, М., 2003.

<sup>4</sup> Kamal Jounblatt, Democratic Nouvelle, Beyrouth, 1987, Kamal Jounblatt, I Speak for Lebanon, London, 1982, F.P. Miller, A. F., Vandome, J. McBrewster, Kamal Jumblatt: Lebanese Civil War, Walid JUmblatt, Philosophy, Sorbonne University, U.S.A., 2010,

کمال جنبلاط، حقيقة الثورة اللبنانية، بيروت، ١٩٨٩

<sup>5</sup> Конституция Ливанской Республики,- в. кн. Конституции государств Ближнего и Среднего Востока, М., 1956.

<sup>6</sup> Палестинская проблема, Документы ООН международных организаций и конференций, М., 1984.

<sup>7</sup> International Documents on Palestine, Beirut, 1970; International Documents on Palestine, Beirut, 1971.

<sup>8</sup> СССР и Арабские страны 1917-1960, Документы и материалы, М., 1961, Ближневосточный конфликт 1957-1967гг.. /Из документов архива внешней политики Российской Федерации, Международный фонд демократии, т. 2, М., 2003.

<sup>9</sup> Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982, Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ., Երևան, 1967, Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975, Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, Կ.



Հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես արաբական երկրների նորագույն պատմությանն առնչվող տարբեր հիմնախնդիրները, ինչի օրինակ կարող են ծառայել Ե. Նաջարյանի, Յ.Գրիգորյանի, Շ.Կարամանուկյանի, Ռ.Կարապետյանի, Լ.Հարությունյանի, Ա. Հարությունյանի<sup>10</sup> և այլոց մենագրություններն ու հոդվածները:

Աշխատանքում քննության ենթարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը նպաստել են, մասնավորապես, խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության հարցերի վերաբերյալ տպագրված մենագրությունները, ժողովածուները և պարբերականները<sup>11</sup>:

Խորհրդային շրջանի հեղինակների շարքում հարկ է հիշատակել Վ.Վոլնովի, Վ.Կատինի, Ե.Դմիտրիևի (նույն ինքը Ե.Պիրլին), Գ.Նիկիտինայի, Ե.Մենդիկովի, Ս.Իվանովի, Ա.Ազարիշևի, Ե.Պրիմակովի, Լ.Դադիանիի, Վ.Կիսելյովի, Մ.Ռադիոնովի և այլոց ուսումնասիրություններն ու մենագրությունները, որոնք առնչվում են Մերձավոր Արևելքի ժողովուրդների և երկրների փոխհարաբերությունների համակարգին, արաբ-իսրայելյան հակամարտության առանձին խնդիրներին և Լիբանանում տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած զարգացումներին<sup>12</sup>:

---

Оганесян, Ливанский конфликт и Армянская община Ливана, Советский опыт решения национального вопроса и его значение для народов Африки и Азии, Ереван, 1982; Н. Оганесян, Отнашения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985.

تقولا ي هوفها نيسيان. أنتضال ألتحرري ألوطني في لبنان (١٩٣٩-١٩٥٨)، بيروت، ١٩٧٤.

<sup>10</sup>Ե. Նաջարյան, Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985, Յ. Գրիգորյան, Սիրիայի ծախքասսիստական դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Երևան, 1989, Շ. Կարամանուկյան, Արաբական պետությունների լիզայի դերը արաբական երկրների հակահմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996, Երևան, 2000, Ա. Հարությունյան, Լիբանանը 1958-1975 թվականներին, Երևան, 2007, Ա. Հարությունյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում (1975-1991թթ.), Երևան, 2008:

<sup>11</sup>Новейшая история арабских стран Азии, М., 1988, Политика Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1966, А. Федченко, Ирак в борьбе за независимость (1917-1969), М., 1970, Межарабские конфликты в странах зарубежного Востока, М., 1991, Современный Ливан (Справочник), М., 1963, Политика США на Арабском Востоке, М., 1961, Арабский мир. Три десятилетие независимого развития, М., 1990.

<sup>12</sup>Вольнов, Ливанский дневник, М., 1980, Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986, Его же Палестинский узель, М., 1978, Е. Пырлин, Ближневосточный лабиринт, М., 1996, Г. Никитина, Государство Израиль, М., 1968, Е. Мельников, Политический и государственный строй Ливана, М., 1976, А. Иванов, Межарабская политика Сирии, Том 1, М., 1986, А. Агарышев, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1983,

Լիբանանի նորագույն պատմությանը՝ հատկապես երկու քաղաքացիական պատերազմներին առնչվող տարբեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է նշել Դ.Յիրոյի, Բ.Օդեիի, Ս.Սաքեյի, Ջ.Բուլլոչի, Պ.Սիլի, Ի.Ռաբինովիչի և Յ.Շեքրդի, Ջ.Նաքաչի, Լ.Մեոյի, Վ.Գլորիայի, Ռ.Յամիզրաչի, Յ.Քուբեյնի, Յ.Քիսինգերի, Մ.Քալբի և Բ.Քալբի, Ա.Նորթոնի, Ա.Դաուիչայի, Թ.Փեթրանի, Մ.Հադսոնի, Ջ.Յուրևիցի, Ջ.Նանթեթի, Մ.Ջոնսոնի, Ֆ.Գրիբլատի, Ջ.Ռանդալի և այլոց մենագրություններն ու հոդվածները<sup>13</sup>:

Առեսախոսության շրջանակներում օգտագործել են նաև Լիբանանի քաղաքական գործիչների՝ Պիեր ժնայելի և Քարիմ Բագրատունու<sup>14</sup> և այլոց մենագրությունները, որոնցում վերջիններս իրենց գնահատականներն են տալիս Լիբանանում ուսումնասիրվող ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին:

Արժեքավոր են նաև արաբ պատմաբանների՝ արաբա-իսրայելյան հակամարտությանը, Լիբանանի և արաբական այլ երկրների ներագույն

---

Ե. Պրիմակով, Սի դավադրության պատմություն, Երևան, 1987, Л. Дадияни, Государственный строй Ливана, М., 1973, В. Киселев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988, М. Радионов, марониты, Из этно-конфессиональной истории восточного средиземноморие, М., 1982.

<sup>13</sup> D. Hiro, The Essential Middle East. A Comprehensive Guide, New York, p. 22, 2003; B. J. Odeh, Lebanon: Dynamics of Conflict, A Modern Political History, London, 1985; Sandre Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991; John Bulloch, Death of a Country. The Civil War in Lebanon, London, 1977; Patrick Seale, Asad. The Struggle for the Middle East, London, 1988; I. Rabinovich, The War for Lebanon 1970-1983, Correll University Press, 1984; I. Rabinovich, H. Shaked, From June to October, The Middle East between 1967 and 1973, New Jersey, 1978; Georges Naccache, Un Rêve Libanais 1943-1972, Ficher du Monde Arabe, 1983; L. M. T. Meo. Lebanon, Improbable Nation, Indiana University Press, 1965; Wade R. Gorla, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, Ithaca Press, 1985; Beate Hamizrachi, The Emergence of the South Lebanon Security Belt: Major Haddad and the Ties with Israel, New York, 1988; Fahim I. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961; H. Kissinger, White House Years, Boston-Toronto, 1979; H. Kissinger, Years of Upheaval, Boston-Toronto, 1982; M. Kalb, B. Kalb, Kissinger, Boston-Toronto, 1974; Augustus Richard Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987; A. I. Dawisha, Syria and Lebanese Crisis, New York, 1980; Tabitha Petran, The Struggle over Lebanon, New York, 1987; Michael C. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, New York, 1985; J. C. Hurewitz, Confessional Democracy, Lebanon, Middle East Politics: The Military Dimension, New York, 1969; J. Nantet, Histoire du Liban, Paris, 1963; Michal Johnson, Class and Client in Beirut: The Sunni Muslim Community 1840-1985, London, 1986; Francis Griblat, La Communauté Libanaise et le Mouvement National Palestinien 1967-1986, Paris, 1988; Jonathan C. Randal, Going all the Way: Christian War lords Israeli Adventures, and the War in Lebanon, New York, 1992; Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, М., 2000.

<sup>14</sup> Կրիմ Բրադունի, السلام المفقود ١٩٧٦-١٩٧٢، بيروت، ١٩٨٤

չրջանի քաղաքական հարաբերություններին նվիրված հետազոտությունները: Այս համատեքստում նշենք Ֆ.Աջամիի, Յ.Բարաքաթի, Ա.Ազմեհի<sup>15</sup>, Ք.Սալիբիի<sup>16</sup>, Մ.Իբրահիմի<sup>17</sup>, Բ.Քորանիի և Ա.Դեսյուկիի<sup>18</sup>, Ա.Բադրի<sup>19</sup>, Ա.Իսմայիլի<sup>20</sup>, Ռ.Ռազակի<sup>21</sup>, Ի.Աբուլշիդի<sup>22</sup> և այլոց աշխատությունները:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության և աղբյուրների համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Ատենախոսության ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ԴՐՈՒՉԱԿԱՆ ՅԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԸ ԼԻԲԱՆՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ (1920-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1975թ.)» անդրադառնում է ֆրանսիական մանդատի շրջանից մինչև երկրում քաղաքացիական երկրորդ պատերազմի բռնկումն (1975թ.) ընկած ժամանակահատվածում Լիբանանի քաղաքական-հասարակական գործընթացներում դրուզների դերակատարման ուսումնասիրությանը:

Այս գլխի առաջին ենթագլուխը՝ «Դրուզների ժողովրդագրական պատկերը Մերձավոր Արևելքում և դրուզական կրոնական ուսմունքի առանձնահատկությունները» նվիրված է ուսումնասիրվող շրջանում դրուզների ժողովրդագրական տվյալների քննությանը Մերձավոր

---

<sup>15</sup> Fouad Ajami, The Vanished Imam Musa al-Sadr and the Shia of Lebanon, Cornell University, 1986; Halim Barakat, Lebanon in Strife: Student Preludes to the Civil War, New York, 1977; Aziz al-Azmeh, “The progressive forces”, Essays on the Crisis in Lebanon, London, 1976.

<sup>16</sup> K. S. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976, London, 1976; K. S. Salibi, The Modern History of Lebanon, London, 1965; ١٩٧٢, بيروت, كمال الصليبي, تاريخ لبنان الحديث.

<sup>17</sup> ١٩٨٣, بيروت, محسن ابراهيم, الحرب و تربية الحركة الوطنية اللبنانية, بيروت

<sup>18</sup> Bahgat Korany and Ali E. Hillal Dessouki, The Foreign Policies of Arab States, Cairo, 1984.

<sup>19</sup> ١٩٧٢, بيروت, ألبرت بدر, محاضرات في ألاقتصاد اللبناني, بيروت.

<sup>20</sup> A. Ismail, Le Liban. Histoire d'un Peuple, Beyrouth, 1965.

<sup>21</sup> ١٩٨٧, بيروت, الدكتور رزق رزق, لبنان و بلاد السوفيات (١٩١٧-١٩٨٧), بيروت.

<sup>22</sup> E. Abouchdid, 30 Years of Lebanon and Syria, Beirut, 1948.

Արևելքում, ինչպես նաև դրուզական կրոնական ուսմունքի առանձնահատկությունների հետազոտությամբ:

1980-ականներին դրուզների թվաքանակը ողջ աշխարհում կազմում էր մոտ 1 մլն: Մերձավոր Արևելքում դրուզները հիմնականում բնակվում են Լիբանանում, Սիրիայում, Իսրայելում և Հորդանանում: Տարբեր տվյալների համաձայն՝ 1980-ականների սկզբին Լիբանանում բնակվող դրուզների թվաքանակը կազմում էր 300.000-ից 390.000 (Լիբանանի բնակչությունը մոտ 3 մլն էր), Սիրիայում բնակվող դրուզների քանակը՝ 350.000-ից 420.000 էր, (Սիրիայի բնակչությունը մոտ 12 մլն էր), Իսրայելում ապրող դրուզների թվաքանակը՝ 75.000 էր՝ (ներառյալ գրավված Գոլանի բարձունքներում ապրող դրուզները, որոնց թվաքանակը նշվում էր 15.000), Հորդանանում դրուզների թվաքանակը կազմում էր 15.000: Դրուզներ բնակվում են նաև ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Արևմտյան Աֆրիկայում և այլ երկրներում ապրող դրուզների թիվը, միասին վերցված, առավելագույնը կազմում է 80.000:

Ամենաազդեցիկ դրուզական համայնքը բնակվում է Լիբանանում: 1932թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Լիբանանում դրուզների թիվը նշվում էր 53.334, ընդհանուր բնակչության թվաքանակը 793.392 էր: Դրուզները կազմում էին բնակչության 6.72%-ը: Նրանք հիմնականում բնակվում էին երկրի 6 ենթաշրջաններում՝ կազաներում, որոնք էին Ալ-Մեթնը՝ 751, Բաբդա՝ 7.392, Ալեյ՝ 17.588, Ալ-Շուֆ՝ 17.049, Մարջույուն՝ 4.171, Ռաշայա՝ 4.424: 1956թ. Լիբանանում հրապարակված ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ երկրում դրուզների թիվը աճել էր և կազմում էր 88.131, ընդհանուր բնակչության թվաքանակը նշվում էր 1.416.520 (բնակչության 6.22%-ը): 1975թ. նոյեմբերին, երկրում քաղաքացիական երկրորդ պատերազմի սկզբնական փուլում լիբանանյան «Ալ-Նահաթ» պարբերականը հրապարակեց ոչ պաշտոնական ժողովրդագրական տվյալներ, որոնց համաձայն՝ Լիբանանում մուսուլմանների և դրուզների թվաքանակը 2.008.000 էր, իսկ բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում էր 3.207.000: Ըստ այդ տվյալների՝ դրուզների թիվը 348.000 էր, որը կազմում էր երկրի բնակչության 10.95%-ը: 1984թ. փետրվարի 6-ին «Նյու Յորք թայմս» պարբերականը ևս հրապարակեց Լիբանանի ժողովրդագրական իրավիճակին վերաբերող ոչ պաշտոնական տվյալներ, որոնց համաձայն՝ դրուզների թիվը Լիբանանում կազմում էր 350.000, իսկ բնակչության ընդհանուր թվաքանակը 3.350.000 էր (դրուզները կազմում էին բնակչության 10.45%-ը):

Մերձավորարևելյան տարածաշրջանի մի շարք երկրներում ապրող դրուզների շարքում ամենամեծն ու ազդեցիկը Լիբանանի դրուզական համայնքն է, որը, այլ դրուզական համայնքների մեծ, դարերի ընթացքում քիչ է ենթարկվել փոփոխությունների և ամենափակ

համայնքներից մեկն է: Ըստ դրուզական կրոնական ուսմունքի՝ «դրուզ երբեք չեն դառնում, այլ՝ ծնվում են»:

Ֆաթիմյան Եգիպտոսում 11-րդ դարում իսմայիլականությունից առանձնացած այս կրոնական ուղղությունն իր անվանումը ստացել է ուսմունքի քարոզիչ Ալ-Դարազիի անունից: Այս կրոնական ուսմունքի ներկայացուցիչները, ավելի ուշ հաստատվելով Սիրիայում և Լիբանանում, կարողացան պահպանվել որպես առանձին էթնոդավանական համայնք, ինչը մեծապես պայմանավորված էր նաև նրանց կողմից տիրապետողի հավատքն առերես ընդունելու հետ: Այս երևույթը հայտնի է «Ալ-թաքիայի» տեսություն անվամբ: Սա թույլատրելի էր դրուզական կրոնական ուսմունքով և միտված էր հենց դրա պահպանմանը:

Իսմայիլական կրոնական ուղղության համաձայն՝ ֆաթիմյան Ալ-Յաքիմ խալիֆան համարվում էր իսլամի հեղինակավոր պաշտպանը և իսմայիլական կրոնական աստիճանակարգի անառարկելի ղեկավարը: Յավատքի սկզբունքները գաղտնի են պահվում 1043 թ.-ին «Կոչի» (արաբերեն՝ դավա) փակումից ի վեր և համայնքում հասանելի են միայն ուսյալներին կամ լուսավորյալներին (արաբերեն՝ ուբալ): Մնացյալները, որոնք հայտնի էին որպես անգետներ կամ անհաղորդներ անվամբ (արաբերեն՝ ջուհալ), պարտավոր էին պահել կրոնի գաղտնիությունը և հավատարիմ մնալ դրան:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ «Լիբանանի դրուզական համայնքը ֆրանսիական մանդատի շրջանում (1920-ական թթ.-1946թ.)», հետազոտվում է ֆրանսիական մանդատի տարիներին Սիրիայի և Լիբանանի դրուզական համայնքների պայքարը՝ ընդդեմ ֆրանսիական մանդատային իշխանության, ինչպես նաև այդ պայքարի համատեքստում լիբանանյան և սիրիական դրուզների միջև համագործակցությունը:

1920թ. ապրիլի 25-ին Ազգերի լիգայի միջնորդությամբ Ֆրանսիան ստացավ Սիրիայի և Լիբանանի, իսկ Մեծ Բրիտանիան՝ Յորդանանի և Պաղեստինի մանդատը: Նշենք, որ դրուզները Սիրիայում և Լիբանանում ակտիվ մասնակցություն ունեցան ֆրանսիացիների դեմ ազգային-ազատագրական պայքարին: Այդ շրջանում տեղի ունեցան մի շարք ապստամբություններ: Դրանց շարքում իր կազմակերպվածությամբ աչքի ընկավ 1922թ. Ջեբել Դրուզի գյուղացիական ապստամբությունը: Այս ապստամբության ղեկավարն էր Սուլթան Ալ-Ատրաշը: Ապստամբությունն իր գազաթնակետին հասավ օգոստոսի 2-ին, երբ ֆրանսիացիներն այնտեղ ուղարկեցին տանկեր և ինքնաթիռներ՝ ապստամբությունը ճնշելու նպատակով: Սուլթան Ալ-Ատրաշի փորձերը դրուզական ապստամբությունը համարաբական շարժում ներկայացնելու և այդպիսով Սիրիայի և Լիբանանի ապստամբներին իր շուրջը համախմբելու նպատակով, սահմանափակ հաջողություն ունեցան:

Զինված ապստամբության նոր ալիքը սկսվեց 1925թ. հուլիսի 18-ին: Մեկ շաբաթվա ընթացքում դրուզները սուլթան Ալ-Ատրաշի գլխավորությամբ ազատագրեցին ողջ Ջեբել Դրուզը: 1925թ. օգոստոսի 2-ին դրուզները պարտության մատնեցին գեներալ Միշոյի գլխավորությամբ ուղարկված 4 հազարանոց ֆրանսիական պատժիչ զորամիավորումները: Դրուզական այս հերոսական պայքարը ոգեշնչեց ողջ Սիրիան: Ամենուրեք սկսեցին ձևավորվել պարտիզանական նոր ջոկատներ, նոր թափ ստացան պարտիզանական պայքարը: Դրուզները Ջեբել Դրուզից հետո սկսեցին քայլեր ձեռնարկել նաև Դամասկոսի ազատագրման ուղղությամբ, սակայն նրանց այդ հարցում խանգարելու և Ֆրանսիայից նոր համալրումներ ստանալու նպատակով ժամանակ առհեռու համար, կոմիսար Սարայը դրուզներին զինադադար առաջարկեց: Դա մտածված դիվանագիտական քայլ էր, որի նպատակն էր թուլացնել դրուզների հետագա պայքարը: 1925թ. սեպտեմբերին ֆրանսիական զորքերը փորձեցին վերջնականապես ճնշել Ջեբել Դրուզի ապստամբներին, սակայն հզոր հակահարված ստացան: Ջեբել Դրուզում ստեղծվեց ժամանակավոր Ազգային հեղափոխական կառավարություն, որի ղեկավարն էր Սուլթան Ալ-Ատրաշը: 1925թ. նոյեմբերին սուլթան Ալ-Ատրաշի եղբայրը՝ Ջեյիդ Ալ-Ատրաշը, ոտքի հանեց լիբանանյան դրուզների համայնքին: Բեյրութի բնակիչները միացան դրուզ ապստամբներին և կազմակերպեցին գործադուլներ և ցույցեր: 1927թ. սկզբին, ֆրանսացիներին հաջողվեց վերջապես ճնշել ապստամբությունը, և Ալ-Ատրաշն ապստամբության այլ ղեկավարների հետ ստիպված եղավ կրկին ապաստան գտնել Ամդիհորդանանում:

Սիրիայի և Լիբանանի դրուզական համայնքները կարևոր դերակատարում ունեցան ֆրանսիական մանդատային իշխանության դեմ պայքարում: Ջեբել Դրուզում և Շուֆ շրջանում դրուզների դիմադրությունը սիրիացիների և լիբանանցիների անկախության համար մղվող պայքարի կարևոր բաղադրիչներից էր:

Թեև Լիբանանի դրուզները կազմում էին երկրի բնակչության մոտ 6%-ը, սակայն դրուզական համայնքը ևս կարողացավ իր տեղն ունենալ 1943 թ. կնքված «Ազգային դաշինքով» սահմանված երկրի կրոնադավանական համակարգում: Դրուզական համայնքը կազմակերպված ուժ էր, որն իր դերակատարումն ուներ երկրում ընթացող զարգացումներում:

Այս գլխի երրորդ ենթագլխում՝ «Դրուզական համայնքը Լիբանանի կրոնադավանական համակարգի համատեքստում», ամդրադարձ է կատարվում Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգի շրջանակներում դրուզների դերակատարմանը:

Լիբանանյան մուսուլմանական համայնքների շարքում էական դեր էր խաղում լիբանանյան դրուզների համայնքը: 1950-60-ականներին

Լիբանանում ընթացող սոցիալական փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև դրուզների վրա, որոնք համայնքի ղեկավար Քամալ Ջունբլաթի գլխավորությամբ սկսեցին բողոքել երկրի քաղաքական մասնատվածության դեմ՝ պահանջելով իրենց համայնքի համար էլ ավելի մեծ մասնակցություն երկրի քաղաքական համակարգում:

Դրուզների մոտ 70%-ը բնակվում էր Լիբանանի Լեռնային Շուֆ շրջանում: Դրուզների շրջանում ողջ համայնքի նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով գոյություն ուներ անընդհատ շարունակվող հակամարտություն մի քանի առավել ազդեցիկ արիստոկրատական ընտանիքների՝ հատկապես Ջունբլաթների և Արսլանների միջև:

Լիբանանի անկախացումից հետո դրուզները սկսեցին եական դեր խաղալ երկրի ներքաղաքական կյանքում, և սա հիմնականում կապված էր դրուզների հանգուցյալ ղեկավար Քամալ Ջունբլաթի գործունեության հետ:

Հիմնականում դրուզներից է կազմված Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, որի ղեկավար՝ Քամալ Ջունբլաթը գտնում էր, որ Լիբանանում խաղաղության հաստատմանն ու պահպանմանը կարող էր նպաստել կրոնադավանական սկզբունքից հրաժարումը: Այն հնարավորություն կտար բոլոր լիբանանյան համայնքներին հանդես գալ միևնույն հարթության վրա: Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը՝ (արաբերեն՝ «Հիզբ ալ-թակադդումի ալ-իշթիրաքի»), որը լիբանանյան ծախ ուժերի կարևոր բաղադրիչն էր: Այն 1948թ. հիմնադրեց Քամալ Ջունբլաթը: Այս կուսակցությունը մանր բուրժուական սոցիալիստական կուսակցություն էր: Այն իրեն համարում էր «միջազգային սոցիալիստական շարժման» բաղկացուցիչ մասը: Սակայն այն հարում էր ոչ թե հեղափոխական, այլ բարեփոխական թևին: Կուսակցության առաջնորդ Քամալ Ջունբլաթը բազմիցս շեշտում էր իր նվիրվածությունն այն սոցիալիզմին, որ ներկայացնում էր էտոլին: Կանգնած լինելով այդ սոցիալիստական դիրքերում՝ կուսակցությունը դեմ էր հեղափոխական գործողություններին և ընդունում էր միայն բարեփոխումների ուղին: Այն դեմ էր հանդես գալիս կոմունիստական գաղափարախոսությանը:

Արտաքին քաղաքականության ասպարեզում պաշտպանում էր Լիբանանի դրական չեզոքության պահպանումը և արաբական երկրների հետ համագործակցության ամրապնդումը: Այն դեմ էր Լիբանանի տարբեր ռազմական դաշինքներին միանալուն: Կողմ էր նաև ԽՍՀՄ-ի և սոցիալիստական դաշինքի երկրների հետ բարեկամական հարաբերությունների զարգացմանը: Այն ուներ մոտ 10.000 անդամ: Կուսակցության կարգախոսն էր «Ազատություն, սոցիալիզմ, արաբիզմ»: Կուսակցությունը պահանջում էր երկրի նախագահի իշխանության սահմանափակում, երկրի հասարակական-քաղաքական կյանքում

բանակի դերի նվազեցում: Այն կտրականապես մերժում էր որևէ արևմտյան միջամտություն Լիբանանի ներքին գործերին: Կուսակցության ղեկավարների (հատկապես Քամալ Ջունբլաթի) կարծիքի հետ հաշվի էին նստում ինչպես կառավարության անդամները, այնպես էլ ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ղեկավարները: 1977թ. մարտին Քամալ Ջունբլաթի սպանությունից հետո կուսակցության ղեկավարությունը ստանձնեց նրա որդին՝ Վալիդ Ջունբլաթը:

Առաջին գլխի չորրորդ ենթագլուխը՝ «Դրուզները լիբանանյան իրադարձությունների հորձանուտում (1947-1967 թթ.)», նվիրված է 1946թ. երկրից ֆրանսիական զորքերի վերջնական դուրս բերումից հետո մինչև 1967 թ. արաբ-իսրայելյան պատերազմն ընկած ժամանակահատվածում Լիբանանում դրուզների գործունեությանը:

1958թ. Լիբանանում բռնկվեց առաջին քաղաքացիական պատերազմը, որն ուներ մի շարք ներքին և արտաքին դրդապատճառներ: Երկրի նախագահ Քամիլ Շամունի (1952-1958թթ.) վարչակարգի դեմ պայքարում զգալի դերակատարում ունեցավ դրուզական համայնքի առաջնորդ Քամալ Ջունբլաթն ու նրա ղեկավարած ԱՍԿ-ն: Շամունին ընդդիմադիր ուժերի ճնշումների արդյունքում լիբանանյան կառավարությունը, փաստորեն, կորցրեց իր սահմանների վերահսկողությունը և Շամունի դեմ բարձրացած ապստամբությունն ընդգրկեց երկրի ողջ տարածքը՝ այդ թվում հիմնականում դրուզներով բնակեցված Շուֆի շրջանը, որտեղ պայքարը գլխավորում էր Քամալ Ջունբլաթը: Նա կազմավորեց իր ռազմական ուժերը, արդարադատության և վարչական այլ մարմինները: Ի վերջո կառավարական ուժերին հաջողվեց ստիպել Ջունբլաթի զորքերին նահանջել:

Լիբանանի բանակը գրավեց չեզոք դիրք և չմիացավ ինչպես ապստամբներին, այնպես էլ չպաշտպանեց Շամունին և նրա կողմնակիցներին: Բանակի հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբը հայտարարեց, որ բանակը կոչված է պաշտպանել Լիբանանն արտաքին հարձակումներից, իսկ ներկա ապստամբությունը ներքին քաղաքական վեճ է:

1958թ. մայիսի 22-ին Քամիլ Շամունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին (ԱԽ) դիմեց բողոքով՝ Արաբական Միացյալ Զանրապետությանը ԱՄՅ/ մեղադրելով Լիբանանի ներքին գործերին միջամտելու, ինչպես նաև ներքաղաքական պայքար հրահրելու մեջ: 1958թ. հուլիսի 15-ին ամերիկյան ծովային հետևակն ափ իջավ Բեյրութում: Ամերիկյան կառավարությունն իր ռազմական միջամտությունը փորձում էր արդարացնել նրանով, որ իրեն օգնության պահանջով դիմել էր Լիբանանի նախագահ Քամիլ Շամունը: Դուլիսի 15-ին Սպիտակ տունը հրապարակեց հայտարարություն, ուր նշված էր, որ Միացյալ Նահանգներն իր զորքերը Լիբանան է ուղարկել ամերիկյան



քաղաքացիների կյանքը պաշտպանելու և Լիբանանի կառավարությանն աջակցելու նպատակով:

Լիբանանի ընդդիմադիր ուժերի կարևոր պահանջներից էր երկրի նախագահ Քամիլ Շամունի հրաժարականը: Սեպտեմբերի 23-ին լրանում էր նրա լիազորությունների ժամկետը: Նախագահի նոր թեկնածուի հարցը դարձել էր ներքաղաքական հանգուցային հարցերից մեկը: Լիբանանի խորհրդարանը 1958թ. հուլիսի 31-ին 48 ձայնով ընդդեմ 7-ի՝ հանրապետության նախագահ ընտրեց գեներալ Ֆուադ Շիհաբին: Նորընտիր նախագահն իր կարևոր խնդիրներից մեկը համարեց ամերիկյան զորքերի դուրս բերումը Լիբանանից: 1958թ. հոկտեմբերի 25-ին ամերիկյան զինվորները, որոնց թիվը տարբեր տվյալներով կազմում էր 10.000-ից 17.000, 102 օր Լիբանանում մնալուց հետո դուրս բերվեցին երկրից:

Լիբանանի նոր կառավարությունն առաջին հերթին շտապեց հրաժարվել 1957թ. ընդունած «Էյզենհաուերի դոկտրինայից», ապա նաև կատարեց հաջորդ քայլը և հրաժարվեց դաշինքներից միանալու քաղաքականությունից: Լիբանանը վերադարձավ դրական չեզոքության քաղաքականությանը:

Նորընտիր նախագահ Ֆուադ Շիհաբը ձեռնամուխ եղավ կրոնադավանական համակարգի խախտված հավասարակշռության վերականգնմանը: 1958թ. սեպտեմբերի 23-ին Լիբանանի նոր նախագահ ընտրված գեներալ Ֆուադ Շիհաբի առջև դրված էին մի շարք խնդիրներ: Նախ ներքին ասպարեզում անհրաժեշտ էր վարել ճկուն քաղաքականություն, ինչը հնարավորություն կտար հավասարակշռություն պահպանել լիբանանյան բոլոր քաղաքական ուժերի և կրոնական համայնքների միջև, իսկ արտաքին ասպարեզում հավասարակշռել հարաբերությունները մի կողմից՝ արաբական աշխարհի, իսկ մյուս կողմից՝ Արևմուտքի հետ: Դրան զուգահեռ՝ Լիբանանը կարիք ուներ լուրջ սոցիալական և տնտեսական բարեփոխումների, որոնք կնպաստեին երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

Նոր նախագահի քաղաքականությունն ամրապնդվեց 1960թ. ամռանը տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններով: Այս ընտրություններում Քամալ Ջումբլաթը հինգերորդ անգամ ընտրվեց պատգամավոր, իսկ Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը նոր խորհրդարանում գրավեց 11 տեղ: 1960-1961թթ. Ջումբլաթը երկրորդ անգամ նշանակվեց կրթության նախարար:

Նախագահն իրականացնում էր մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին «լիբանանյան պետության արդիականացմանն ու ռացիոնալիզացմանը»: Նախագահի այս քաղաքականությանն իր աջակցությունը հայտնեց նաև Քամալ Ջումբլաթը: 1961թ. հոկտեմբերին Լիբանանում ձևավորվեց նոր կառավարություն՝ Ռաշիդ Քարամեի

գլխավորությամբ, որում Քամալ Ջումբլաթը զբաղեցրեց հասարակական աշխատանքի և ծրագրավորման նախարարի պաշտոնը:

1964թ. նախագահական ընտրություններում 92 ծայնով՝ ընդդեմ 7-ի, հանրապետության նախագահ ընտրվեց Շարլ Յելուն (1964-1970թթ.), ով հայտարարեց, որ շարունակելու էր Ֆուադ Շիհաբի վարած քաղաքական ուղեգիծը, հարազատ է մնալու դրական չեզոքության քաղաքականությանն ու ավարտին է հասցնելու իր նախորդի սկսած սոցիալ-տնտեսական բարեփոխումները:

1960-ականների երկրորդ կեսից Լիբանանում պաղեստինյան գործոնի ակտիվացման գործընթացում Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը՝ ծախ ուժերի ճակատում, մեծապես օժանդակեց պաղեստինյան զինված խմբավորումների Իսրայելի դեմ պայքարում Լիբանանի հարավի օգտագործման օրինականացման գործընթացին:

Առաջին գլխի հինգերորդ ենթագլխում՝ «Լիբանանյան հակասությունների սրումը. Քամալ Ջումբլաթը «Ազգային ճակատի» ղեկավար (1967-1975թթ.)», անդրադարձ է կատարվում Լիբանանում 1975թ. բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի դրդապատճառների սրման գործընթացում երկրի ծախ ուժերի ղեկավար դրուզ ականավոր քաղաքական գործիչ Քամալ Ջումբլաթի գործունեությանը:

1967թ. հունիսյան արաբ-իսրայելյան պատերազմից հետո մերձավորարևելյան և լիբանանյան քաղաքական ասպարեզում ավելի ակնհայտ էր դառնում պաղեստինյան հարցի առաջնահերթ դառնալու միտումը: Այս հանգամանքը չէր կարող չանդրադառնալ պաղեստինյան մեծաքանակ փախստականներ ապաստանած Լիբանանի ներքաղաքական իրադրության վրա: Այս պատերազմից հետո Լիբանանը դարձավ ՊՂՇ-ի գլխավոր կենտրոններից մեկը: Հիմնվելով Լիբանանում հաստատված պաղեստինյան փախստականների վրա՝ ՊՂՇ-ն իր գործելակերպով նպաստեց Իսրայելի դեմ համաարաբական հակամարտության մեջ Լիբանանի ներքաշմանը: Բացի այդ պաղեստինցիներին մեծապես աջակցում էին լիբանանյան ծախ ուժերը, որոնք դժգոհ էին իշխող շրջանակների և աջերի Լիբանանը մերձավորարևելյան հակամարտությունից հնարավորինս հեռու պահելու մտադրությունից:

1970թ. օգոստոսի 17-ին լիբանանյան խորհրդարանը գումարեց նիստ, որում մեկ ձայնի առավելությամբ հաղթանակ տարավ «Կենտրոնական դաշինքի» և «Եռյակ դաշինքի» համատեղ թեկնածու Սուլեյման Ֆրանժիեն: Իսկ 1972թ. մայիսի վերջին Լիբանանում կայացան խորհրդարանական ընտրություններ: Հակառակ լիբանանյան աջ շրջանակների բոլոր ջանքերին՝ ծախ ուժերն ընդլայնեցին իրենց ներկայացչությունը երկրի խորհրդարանում: «Ազգային ճակատը», որը

գլխավորում էր Քամալ Ջունբլաթը, ստացավ 10 պատգամավորական տեղ նախկին 7-ի փոխարեն:

1972թ. սկսած Իսրայելը վարում էր «չհայտարարված պատերազմ» Լիբանանի հարավային շրջանների դեմ: 1972թ. նոյեմբերին Բեյրութում լիբանանյան ձախերը գումարեցին Համաարաբական ժողովրդական համաժողով, որում որոշում ընդունվեց կազմավորել Պաղեստինյան հեղափոխության աջակցության արաբական ճակատ: Համաժողովն ընտրեց Գլխավոր խորհուրդ, որի կազմում էին 14 արաբական պետությունների ներկայացուցիչներ: Այս ճակատի գլխավոր քարտուղար ընտրվեց Քամալ Ջունբլաթը:

Ակնհայտ է, որ 1973-1975թթ. Լիբանանում ներքաղաքական իրավիճակի սրումն ամփոփականորեն կապված էր նաև մերձավորարևելյան հակամարտության խորացման հետ: Այս շրջանում Լիբանանում ներքաղաքական իրավիճակի սրումն ուղեկցվում էր նաև սոցիալական ճգնաժամի խորացման հետ: Լիբանանյան ձախերը՝ Քամալ Ջունբլաթի գլխավորությամբ, պահանջում էին երկրում իրականացնել սոցիալական, տնտեսական և քաղաքական որոշակի բարեփոխումներ, մասնավորապես վերանայել 1943թ. «Ազգային դաշինքն» ու երկրի սահմանադրությունը, խորհրդարանում պատգամավորների ընտրության և պետական պաշտոնյաների նշանակման հարցում հրաժարվել կրոնադավանական սկզբունքից և երկրի կառավարման գործում ընդլայնել իսլամադավանների մասնակցությունը:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԼԻԲԱՆԱՆԻ ԴՐՈՒՋԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱՋՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1975-1990ԹԹ.)» ներառում է երկրում շուրջ 15 տարի տևած քաղաքացիական երկրորդ պատերազմի շրջանում դրուզական համայնքի և հիմնականում դրուզներից բաղկացած Առաջադիմական սոցիալիստական կուսակցության գործունեության քննությունը:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Դրուզական գործունը ծախ ուժերի «Ազգային ճակատում» (1975-1978թթ.)», հետազոտվում է քաղաքացիական երկրորդ պատերազմի այս շրջանում Լիբանանի դրուզական համայնքի ու «Ազգային ճակատում» այն ներկայացնող Առաջադիմական սոցիալիստական կուսակցության դերակատարումը:

1975թ. ապրիլի 13-ին Լիբանանում բռնկվեց երկրորդ քաղաքացիական պատերազմը, որը տևեց մոտ 15 տարի՝ պատճառելով զգալի մարդկային և նյութական կորուստներ: Ձինված հակամարտության արդյունքում Լիբանանը, ինչպես նաև մայրաքաղաք Բեյրութը, բաժանվեց երկու մասի: Արևելյան Բեյրութն ու երկրի քրիստոնեական շրջանները վերահսկում էին աջ ուժերը, իսկ արևմտյան Բեյրութն ու մուսուլմանական շրջանները՝ ձախերը:

Քամալ Ջունբլաթի ղեկավարությամբ «Ազգային ճակատում» համախմբված ձախերը դեմ էին ավանդական մուսուլման ղեկավարների

կրոնադավանական համակարգի շրջանակներում հակամարտությունը կարգավորելու կոչերին: 1975թ. օգոստոսին «Ազգային ճակատը» ներկայացրեց «քաղաքական համակարգի բարեփոխումների անցումային ծրագիրը», որում շեշտվում էր կրոնադավանական համակարգի վերացման անհրաժեշտությունը: Նպատակը Լիբանանում այնպիսի քաղաքական համակարգի ներդրումն էր, որը կհամապատասխաներ բնակչության մեծամասնության՝ մուսուլմանների շահերին: Սակայն վերոնշյալ ծրագիրը մերժեց ինչպես աջ ուժերի ղեկավարությունը, այնպես էլ մուսուլման ավանդական ղեկավարները:

Մինչև 1976թ. հունիսը «Ազգային ճակատը»՝ Քամալ Ջունբլաթի ղեկավարությամբ, կարողացավ զգալի հաջողությունների հասնել երկրի աջ ուժերի նկատմամբ և վերահսկողություն հաստատեց երկրի տարածքի 80%-ի նկատմամբ: Սակայն Քամալ Ջունբլաթի, ՊԱԿ-ի և Սիրիայի միջև լուրջ տարածայնություններ ի հայտ եկան հետագա ռազմավարության մշակման հարցում: Բացի այդ Քամալ Ջունբլաթը գտնում էր, որ պաղեստինցիները Լիբանանում պետք է գործեին ձախերի հսկողության ներքո և լինեին վերահսկել ու հնարավորինս օգտագործում էր պաղեստինյան ռեսուրսը՝ ձախ ուժերի դիրքերը երկրում ուժեղացնելու նպատակով:

Երկրում շարունակվող քաղաքացիական պատերազմի պայմաններում Սիրիան 1976թ. հունիսի 1-ին երկրի տարածք մտցրեց զորամիավորումներ և պահանջեց կրակի ամմիջապես դադարեցում: Սիրիան բավական զգուշավոր դիրքորոշում էր որդեգրել նաև երկրում պաղեստինցիների ներկայության ու նրանց աճող ազդեցության նկատմամբ: Հենց դա էր պատճառը, որ որոշակի հակասություններ ի հայտ եկան մի կողմից Քամալ Ջունբլաթի ու ձախ ուժերի և ՊԱԿ-ի, իսկ մյուս կողմից Դամասկոսի միջև: 1977թ. որոշակիորեն վերականգնվեց Սիրիայի, ՊԱԿ-ի և «Ազգային ճակատի» միջև համագործակցությունը: Սակայն ձախ ուժերն ու պաղեստինյան զինված խմբավորումներն ունեին լուրջ խնդիրներ, որոնք էլ ավելի սրվեցին 1977թ. մարտի 16-ին Քամալ Ջունբլաթի սպանությունից հետո: Այս սպանությունը մինչ օրս դեռևս չի բացահայտվել: Սպանության իրականացման մեջ կասկածվում էին Սիրիական ազգային սոցիալական կուսակցությունը, որն այս գոծում համագործակցել էր «Բասս» կուսակցության հետ: 2005թ. Քամալ Ջունբլաթի որդին՝ Վալիդ Ջունբլաթը, ով հոր մահից հետո զլխավորեց «Ազգային ճակատը», այս սպանության մեջ մեղադրեց Սիրիայի հատուկ ծառայություններին:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դրուզական համայնքը 1978թ. և 1982թ. իսրայելյան ներխուժումների ընթացքում», քննության է ենթարկում Լիբանան իսրայելյան երկու ներխուժումներն ու դրանց հետևանքները, այդ թվում նաև երկրի դրուզական համայնքի համար:

1978թ. սկզբին Լիբանանի կառավարությունը բացարձակապես չէր վերահսկում երկրում տեղի ունեցող զարգացումները: 1978թ. մարտի 11-ին պաղեստինյան ջոկատներից մեկի իսրայելյան հյուսիսային բնակավայրերի նկատմամբ հարձակմանն ի պատասխան՝ մարտի 15-ին «Լիթանի» ռազմական գործողության շրջանակներում իսրայելյան 30.000 բանակը ներխուժեց Հարավային Լիբանան և գրավեց մինչև Լիթանի գետն ընկած շրջանները՝ երկրի ողջ տարածքի 1/10-րդ մասը: Իսրայելի զորքերը Լիբանանի տարածքը լքեցին միայն 1978թ. հունիսին և սահմանի երկայնքով 10 կմ գոտին փոխանցվեց ոչ թե ՄԱԿ-ի ուժերին, այլ աջ ուժերի դաշնակից ԼՅԲ-ին: Այսպիսով՝ Իսրայելին հաջողվեց «անվտանգության գոտի» ստեղծել Լիբանանի հարավում:

1982թ. հունիսի 6-ի առավոտյան իսրայելական տարբեր սովյալներով 80-ից 100հզ. ցամաքային ուժերը՝ ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետ համատեղ՝ զինված նորագույն տեխնիկայով, երկրորդ անգամ ներխուժեցին Լիբանան: Քաղաքացիական պատերազմի ընթացքում՝ պայմանավորված Լիբանանի տարածքում 1976թ. սիրիական զորքերի տեղակայմամբ, ապա նաև 1982թ. իսրայելյան երկրորդ ներխուժմամբ, Լիբանանի դրուզները հնարավորություն ունեցան դրուզական Շուֆ շրջանում շփվել սիրիական և իսրայելյան զորքերում ներգրավված իրենց դավանակիցների հետ: Իսրայելում և Լիբանանում բնակվող դրուզների միջև շփումները դադարել էին 1948թ.՝ արաբ-իսրայելյան առաջին պատերազմից հետո, իսկ Սիրիայի և Լիբանանի դրուզների միջև ուղղակի շփումներն ընդհատվել էին ֆրանսիական մանդատի ավարտից հետո:

Օգոստոսի 19-ին Իսրայելն ընդունեց ԱՄՆ բանազնաց Ֆիլիպ Չաբիբի միջնորդությամբ արևմտյան Բեյրութից սիրիական զորամիավորումների և ՊԱԿ-ի զինված խմբավորումների դուրս բերման ծրագիրը: Հայտնվելով բավական բարդ իրավիճակում՝ ՊԱԿ-ը համաձայնվեց քննարկել Բեյրութից իր զինված խմբավորումների դուրս բերման իսրայելական պահանջը: Լիբանանում անվտանգության ապահովման, ինչպես նաև պաղեստինյան զինված խմբավորումների Բեյրութից դուրս բերումը վերահսկելու նպատակով 1982թ. օգոստոսի 21-ին Բեյրութ մտցվեցին ՄԱԿ-ի բազմազգ խաղաղապահ ուժեր, որոնց կազմի մեջ մտան ամերիկյան, ֆրանսիական, իտալական և անգլիական զորամիավորումներ: Մինչև 1982թ. սեպտեմբերի 1-ը ՊԱԿ-ի 8.144 և սիրիական վերահսկողության տակ գտնվող Պաղեստինի ազատագրության բանակի 3.500 մարտիկներ, ինչպես նաև 2.700 սիրիացի զինվորներ լքեցին Արևմտյան Բեյրութը:

Լիբանանում իսրայելական շարունակվող օկուպացիան նպաստեց Լիբանանում Իսրայելի ռազմական ներկայության դեմ արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացմանը: Այդ դիմադրությունը գլխավորեցին ձախ ուժերը՝ Վալիդ

Ջումբլաթի գլխավորությամբ, որոնք 1982թ. սեպտեմբերին ձևավորեցին «Լիբանանյան հայրենասիրական դիմադրության» ճակատը, որի հետ ակտիվորեն համագործակցում էին նաև շիական «Ամալ» ու «Յիզբալլահը»:

Այս գլխի երրորդ ենթագլխում՝ «Դրուզների դերը Լիբանանի ձախ ուժերի և Սիրիայի դիրքերի ամրապնդման գործընթացում (1983-1988թթ.)», ուսումնասիրվում է 1980-ականներին երկրում քաղաքացիական երկրորդ պատերազմի ընթացքում քաղաքական տարբեր վերադասավորումներն ու դրանցում դրուզական համայնքի դերը:

1982թ. վերջին լիբանանյան իշխանություններն ԱՄՆ-ի միջնորդությամբ համաձայնվեցին բանակցություններ վարել Իսրայելի հետ: Երկարատև բանակցությունների արդյունքում 1983թ. մայիսի 17-ին Լիբանանի և Իսրայելի պատվիրակությունները ստորագրեցին «Խաղաղության մասին համաձայնագիրը»: Այդ փաստաթուղթը նախատեսում էր երկու երկրների միջև պատերազմական իրավիճակի դադարեցում և իսրայելյան զորքերի աստիճանաբար դուրս բերում: Չամաձայնագիրն արգելում էր Լիբանանին թույլ տալ իր տարածքով (նաև օդային) որևէ երկրի զորամիավորումների տեղաշարժ, որն Իսրայելի հետ չունեն դիվանագիտական հարաբերություններ:

Չակառակ լիբանանյան աջերի, որոնք ոգևորությամբ ընդունեցին լիբանանասիրայելական համաձայնագրի ստորագրումը, ձախ ուժերը, նրանց հետ համագործակցող շիական կազմակերպություններ, ինչպես նաև Սիրիան, կտրականապես մերժում էին ճանաչել այն՝ շեշտելով, որ համաձայնագիրը ոտնահարում էր Լիբանանի անկախությունն ու ինքնիշխանությունը:

1983թ. հունիսի 23-ին ձախ ուժերը հայտարարեցին «Ազգային փրկության» ճակատի (ԱՓԳ) ստեղծման մասին, որում միավորվեցին դրուզներից բաղկացած Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, Կոմունիստական գործունեության կուսակցությունը և այլն: Գակատին իրենց աջակցությունը հայտնեցին նաև նախկին վարչապետ Ռաշիդ Քարամեն և նախկին նախագահ Սուլեյման Ֆրանժին: Գակատի ղեկավար դարձավ Վալիդ Ջումբլաթը: ԱՓԳ-ի հետ սերտորեն համագործակցում էր նաև շիական «Ամալ» շարժումը: Գակատի խարտիան որպես նպատակ հռչակեց Լիբանանից իսրայելյան զորքերի և բազմազգ խաղաղապահ ուժերի դուրս բերումը, ինչպես նաև լիբանանասիրայելյան համաձայնագրի չեղյալ հայտարարումն ու լիբանանյան աջերի, մասնավորապես «Քաթաիբ» կուսակցության քաղաքական մենիշխանության դեմ պայքարը:

Լիբանանասիրայելյան համաձայնագրի ստորագրումից հետո Լիբանանում դեպքերի զարգացումը կենտրոնացավ հիմնականում մինչև

Աուալի գետն ընկած տարածքներից իսրայելյան զորքերի մասնակի դուրս բերման վրա: Այս շրջանում զինված բախումները ներառեցին հիմնականում դրուզներով բնակեցված Լեռնային Լիբանանի Շուֆ շրջանը: Էական նշանակություն ունեցավ 1983թ. սեպտեմբերի 3-ին այստեղից իսրայելյան զորքերի դուրս բերումը, որոնք այդ շրջանում ձախ ուժերի հետ բախումներում կրում էին զգալի կորուստներ: Ռազմական գործողությունների ընթացքում, հատկապես դրուզների ջանքերի շնորհիվ, Շուֆը մաքրվեց լիբանանյան աջերի զինյալներից և անցավ ձախերի հսկողության տակ: Լիբանանյան գործերում նախաձեռնությունը կրկին անցավ լիբանանյան ձախերի և Սիրիայի կողմը: Այս հարցում էական դեր խաղաց նաև դրուզական համայնքը, որի հաղթանակը իսրայելյան զորամիավորումների և աջ ուժերի նկատմամբ Շուֆ շրջանում ուժերի հարաբերակցությունը փոխեց հոգուտ լիբանանյան ձախերի:

Երկրի ձախ ուժերի ճշնումների արդյունքում 1984թ. փետրվարի 28-ին Լիբանանի նախագահ Ամին ժայելը առաջին անգամ այցելեց Դամասկոս և մարտի 5-ին Դամասկոսի հետ ստորագրված պայմանավորվածության համաձայն լիբանանյան կառավարությունը պաշտոնապես չեղյալ հայտարարեց Իսրայելի հետ «խաղաղության համաձայնագիրը»:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում` «Քաղաքացիական երկրորդ պատերազմի ավարտն ու խաղաղության հաստատումը Լիբանանում (1988-1990թթ.)», քննության են ենթարկվում այս պատերազմի ավարտին նախորդած զարգացումները Տաիֆի համաձայնագիրն ու երկրի աջ ուժերի շրջանում հակասությունների սրման գործընթացը:

1980-ականների վերջին լիբանանյան աջ ուժերի զինված խմբավորումների ղեկավար Սամիր Ջաջան իր քաղաքական նպատակ էր հռչակել նաև երկրի ողջ քրիստոնյաներին «լիբանանականության» գաղափարի շուրջ համախմբումը: Այս նախագիծը ևս զարգացնում էին մարոնի ծայրահեղական քաղաքական և մտավորական որոշ շրջանակներ, որոնք նախատեսում էին երկազգային քրիստոնյաների և մուսուլմանների ինքնավար հանրապետությունների կամ լայն ապակենտրոնացման ստեղծում Լիբանանի դաշնային պետության համատեքստում:

Լիբանանի դրուզական համայնքը` Վալիդ Ջունբլաթի գլխավորությամբ, ինչպես նաև ձախ ուժերն ընդհանրապես, կտրուկ քննադատեցին Սամիր Ջաջայի գործունեությունն ու նրա քաղաքական նպատակները: Վերջիններս դեմ էին Շվեյցարիայի օրինակով Լիբանանի կոնդոնիզացիայի ծրագրին: Նշենք, որ «Լիբանանյան ճակատում» ևս ոչ բոլոր ուժերն էին համամիտ վերոնշյալ ծրագրի իրականացման հետ:

Երկրի կառավարումը վերջնականապես իր ձեռքում կենտրոնացնելու նպատակով` 1988թ. մայիսին մարոնի գեներալ Միշել

Աունը հայտարարեց Լիբանանի տարածքը «Սիրիայից ազատագրելու պատերազմ»: Սիրիան իր հերթին ցամաքային և ծովային շրջափակման ենթարկեց «քրիստոնեական ինքնավարության» այն շրջանները, որոնք գտնվում էին Միշել Աունի զինված խմբավորումների հսկողության տակ: Ի պատասխան՝ զեներալը ռմբակոծեց Արևմտյան Բեյրութում տեղակայված սիրիական ռազմական ուժերի դիրքերը: Միշել Աունն իր համար ընտրեց լիբանանյան աջ ուժերի «ճանաչիր քո թշնամուն, Սիրիան քո թշնամին է» կարգախոսը:

1980-ականների վերջին ուժեղացել էր միջազգային հանրության, հատկապես ԱՄՆ-ի, լիբանանյան հակամարտության վերջնական կարգավորմանն ուղղված ջանքերը: 1989թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 22-ը Լիբանանի խորհրդարանի 58-ը պատգամավորներ Տահիֆուն (Սաուդյան Արաբիա), քննարկում էին Ազգային համաձայնության խարտիան: Նշենք, որ Սալիմ Ալ-Յոսը, լիբանանյան ծախերը՝ Վալիդ Ջունբլաթի ղեկավարությամբ ու աջ ուժերի հրամանատարությունը՝ Սամիր Ջաջայի գլխավորությամբ, նպատակ ունենալով վերջ դնել Լիբանանում երկարատև քաղաքացիական պատերազմին, ճանաչեցին Տահիֆի համաձայնագիրը: Միայն Աունը հրաժարվեց ընդունել այն, փաստարկելով, որ Լիբանանի և Սիրիայի միջև հատուկ բնույթի հարաբերություններ հաստատող այդ փաստաթուղթը «օրինականացնում էր Լիբանանի նկատմամբ Սիրիայի հավակնություններն ու երկրի տարածքում սիրիական ռազմական ուժերի ներկայությունը»:

Ծոցի II ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ի հովանու ներքո հակահրաքյան միջազգային կոալիցիային միանալով՝ Սիրիան կարողացավ ապահովել Լիբանանում սիրիական ներկայության պահպանման նկատմամբ ամերիկյան վարչակազմի չեզոքությունը: 1990թ. հոկտեմբերի 13-ին սիրիական ռազմաօդային և ցամաքային ուժերն արդեն ամբողջովին լիբանանյան կառավարության վերահսկողության տակ գտնվող բանակի, ինչպես նաև Սամիր Ջաջայի գլխավորությամբ լիբանանյան ուժերի զինված խմբավորումների հետ համատեղ հաջողեցրին վերջնական պարտության մատնել Աունին:

Երկարատև քաղաքացիական պատերազմն ավարտված էր: Շուրջ 15 տարի (1975-1990թթ.) տևած այս պատերազմի ընթացքում Լիբանանում զոհերի թիվը հասնում էր 150.000-ի, որից 15.700-ը՝ միայն 1982թ. իսրայելական ներխուժման ընթացքում:

1992թ. ամռանը, շուրջ 20 տարի ընդմիջումից հետո, երկրում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Սիրիական վերահսկողության տակ ընթացող այդ ընտրությունները բոյկոտեցին լիբանանյան աջ ուժերն ու նրանց ընտրազանգվածի շուրջ 80%-ը: Արդյունքում խորհրդարան ընտրվեց 128 պատգամավոր. 8 տեղ ստացավ «Հիզբալլահը», 64 աթոռ գրավեցին քրիստոնյաները՝ 34 մարոնի, 14 հույն



ուղղափառ, 8 հույն կաթուղի, 6 հայ, 2 այլ քրիստոնեական համայնքների ներկայացուցիչ և 64 տեղ մուսուլմանները՝ 27 սուննի, 27 շիա, 8 դրուզ, 2 ալավի:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ, ամփոփելով ատենախոսության շրջանակներում քննարկվող հիմնախնդիրները, հեղինակը համզել է հետևյալ եզրահանգումների.

- Ֆրանսիական մանդատի տարիներին, երբ դեռևս գոյություն չուներին անկախ Սիրիա և Լիբանան պետությունները, պատմաաշխարհագրական Սիրիայի տարածքում ապրող դրուզական համայնքները՝ հիմնականում Ջեբել Դրուզում և Շուֆ շրջանում, զգալի դերակատարում ունեցան այդ երկրների ազգային ազատագրական պայքարում և մեծապես նպաստեցին նրանց անկախության նվաճմանը:

-1940-ականների երկրորդ կեսից մինչև 1960-ականների երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում արդեն անկախ Լիբանանում տեղի ունեցող գործընթացներում իր ակտիվ դերակատարումն ունեցավ նաև երկրի դրուզական համայնքը: 1948թ. հիմնադրված և հիմնականում դրուզներից կազմված Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը զգալի դեր խաղաց երկրի նախագահներ Բիշարա Ալ-Խուրիի և Քամիլ Շամունի (1952-1958թթ.) վարչակարգերի դեմ պայքարում: Իսկ Ֆուադ Շիհաբի նախագահության շրջանում (1958-1964թթ.) Քամալ Ջունբլաթն իր մասնակցությունը բերեց նախագահի բարեփոխումների ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև իր աջակցությունը հայտնեց այս շրջանում Ֆուադ Շիհաբի արաբական աշխարհի հետ հարաբերությունների սերտացմանն ուղղված քաղաքականությանը:

-Լիբանանի դրուզական համայնքը՝ Քամալ Ջունբլաթի գլխավորությամբ ակտիվորեն ներգրավված էր նաև 1960-ականների վերջին և 1970-ականների առաջին կեսին երկրում տեղի ունեցող իրադարձություններում: 1960-ականների երկրորդ կեսին, ստանձնելով լիբանանյան ձախ ուժերի ղեկավարությունը, որոնք համախմբվել էին «Ազգային ճակատում», Ջունբլաթն ակտիվորեն պայքարում էր երկրի կառավարման հիմքում դրված կրոնադավանական համակարգում, որն ամրագրված էր «Ազգային դաշինքում», փոփոխություններ իրականացնելու և դրա համատեքստում ինչպես դրուզների, այնպես էլ ողջ մուսուլմանների դերակատարումը մեծացնելու համար:

-1960-ականների երկրորդ կեսից Քամալ Ջունբլաթի հիմնած Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունն ակտիվորեն համագործակցում էր նաև երկրում հաստատված պաղեստինյան զինված խմբավորումների հետ, դեմ էր հանդես գալիս լիբանանյան աջ ուժերի դրանք երկրի տարածքից դուրս բերելու ծրագրերին: Նշենք, որ լիբանանյան ձախերի և պաղեստինցի զինյալների համագործակցությունը փոխաշահվետ էր: ՊԴՇ-ն էլ, իր հերթին,

ռազմական զգալի աջակցություն էր ցույց տալիս լիբանանյան ծախերին՝ աջ, հիմնականում քրիստոնեական, ուժերի դեմ պայքարում:

-Քաղաքացիական երկրորդ պատերազմի ողջ ընթացքում (1975-1990թթ.) Լիբանանի դրուզական համայնքն ու «Ազգային ճակատում» այն ներկայացնող Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը՝ Քամալ Ջունբլաթի, ապա նաև նրա որդու՝ Վալիդ Ջունբլաթի գլխավորությամբ, լիբանանյան երկարատև հակամարտության կարևորագույն դերակատարներից էր, որի գործունեությունն իր էական ազդեցությունն ունեցավ տվյալ շրջանի ներլիբանանյան իրողություններում:

-Քաղաքացիական պատերազմի սկզբնական փուլում (1975-1976թթ.)՝ մինչև Սիրիայի ուղղակի ներգրավումը լիբանանյան հակամարտության մեջ, դրուզ ղեկավար Քամալ Ջունբլաթի գլխավորությամբ երկրի ծախ ուժերին և պաղեստինյան զինված մարտիկներին հաջողվեց առավելության հասնել աջ ուժերի նկատմամբ և վերահսկողություն հաստատել երկրի մի շարք ռազմավարական շրջաններում: Սակայն Սիրիայի ներգրավումը լիբանանյան հակամարտության մեջ, այս փուլում աջերին աջակցություն ցույց տալու և երկրում հակամարտող ուժերի միջև հավասարակշռությունը պահելու նպատակով, թուլացրեց «Ազգային ճակատի» դիրքերը: Երկրի զգալի մասը հայտնվեց սիրիական վերահսկողության ներքո:

-1983թ. լիբանանախորայեյան համաձայնագրի ստորագրումից հետո «Ազգային ճակատին» հաջողվեց համախմբել երկրի ծախ ուժերին և շիական կազմակերպություններին և ակտիվ պայքարի արդյունքում հասնել ինչպես վերոնշյալ համաձայնագրի չեղյալ հայտարարմանը, այնպես էլ իսրայելյան զորքերի աստիճանական դուրս բերմանը: Այս պայքարում էական նշանակություն ունեցավ երկրի դրուզական համայնքն ու մասնավորապես ԱՍԿ-ն, որի հաջողությունները, հատկապես Շուֆ շրջանում, բեկումնային նշանակություն ունեցան այս փուլում «Ազգային ճակատի» դիրքերի ամրապնդման և աջերի նկատմամբ առավելության հասնելու գործում:

-Քաղաքացիական պատերազմի վերջին փուլում, օգտվելով աջ ուժերի շրջանում հակասությունների սրումից, լիբանանյան ծախերը, այդ թվում նաև հիմնականում դրուզներից բաղկացած ԱՍԿ-ն, կարողացան ամրապնդել իրենց դիրքերը և, ընդունելով Տաիֆի համաձայնագիրն ու Լիբանանում սիրիական վերահսկողության հաստատումը, փորձեցին իրենց համար նպաստավոր պայմաններ ապահովել հետպատերազմյան Լիբանանի քաղաքական կյանքում: ԱՍԿ-ի զինված մարտիկները ևս զինաթափվեցին քաղաքացիական պատերազմի ավարտից հետո: Նրանցից ոմանք ներգրավվեցին լիբանանյան բանակի կազմում:

-Պատերազմի ավարտից հետո 1992թ. երկրում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում Վալիդ Ջունբլաթն ընտրվեց

պատգամավոր և, գլխավորելով 8 դրուզներից բաղկացած խմբակցությունը, երկրի օրենսդիր մարմնում սերտորեն շարունակեց դեռևս քաղաքացիական պատերազմի տարիներին հաստատված սերտ համագործակցությունը «Յիզբալլահն» ու «Ամալը» ներկայացնող շիա պատգամավորների հետ:

**Չետագոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում**

1. Մելքոնյան Արթուր, Դրուզների կրոնաքաղաքական ուսմունքի առանձնահատկությունները – Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 2(51), Երևան, 2012, էջ 132-139:
2. Մելքոնյան Արթուր, 1958 թ. լիբանանյան ճգնաժամը և դրուզական համայնքը – Լրատու գիտական հոդվածների ժողովածու, 1(12), Երևան, 2012, էջ 98-104:
3. Մելքոնյան Արթուր, Լիբանանի դրուզական համայնքը Լիբանանում 2-րդ քաղաքացիական պատերազմի առաջին փուլում (1975-1977թթ.) – Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 3(52), Երևան, 2012, էջ 153-159:

Мелконян Артур Ашотович

Роль друзской общины Ливана во внутривосточных событиях  
страны (с 1920-ых по 1990г.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических  
наук по специальности 07.00.02 – «Всемирная история»

Защита состоится 27 декабря 2012г. В 13.00 часов на заседании  
специализированного совета 006 «Всемирная история»,  
действующего при Институте Востоковедения НАН РА,  
по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

## РЕЗЮМЕ

В ряду этно-религиозных общин, проживающих на Ближнем Востоке, в том числе и в Ливане, свою особую роль играет друзская община. Исследование роли друзской общины во внутривосточных событиях, происходящих в Ливане с 1920-ых годов по 1990г., имеет не только важное научное, но и политическое и практическое значение.

В настоящее время на Ближнем Востоке друзские общины существуют в Ливане, Сирии, Израиле и Иордании. Друзские общины в течение веков менее всего подвергались изменениям и считаются одной из самых закрытых вероисповедных групп в регионе. В этом заключается также причина того, что друзское религиозное учение сравнительно мало исследовано.

В 11-ом веке в Фатимитском Египте происшедшие из исмаилитства последователи друзского религиозного направления позднее поселились в Сирии и Ливане, где основали свои поселения главным образом в горных районах. С течением времени друзы составили один из важных компонентов этно-религиозной структуры этих стран. Не случайно, что в новейшую эпоху эта община сыграла свою существенную роль как в борьбе сирийцев и ливанцев против французской мандатной власти, так и во внутривосточном, культурном, общественном и социально-экономическом процессах уже независимой Сирии и Ливана.

В изучаемую эпоху деятельность ливанской друзской общины главным образом была связана с влиятельным руководителем общины Камалем Джумблатом, который также являлся основоположником Прогрессивной социалистической партии (ПСП). Социально-политические процессы, происходящие в Ливане в конце 1950-ых и в

1960-ых, активизировали также друзскую общину, которая во главе с Камалем Джумблатом начала борьбу за расширение полномочий друзов в рамках религиозно-конфессиональной системы.

Актуальность вышеуказанной темы связана также с исследованием деятельности друзской общины в годы второй гражданской войны в Ливане (1975-1990г.г.) и представляющей ее ПСП, которая являлась основным ядром левых ливанских сил, а Камаль Джумблат – руководителем «Национального фронта». В течение всего периода длительного политического кризиса в Ливане Камаль Джумблат, а после 1977-го года его сын Валид Джумблат вместе с палестинскими вооруженными группировками, а затем также вместе с шиитскими движениями «Амал» и «Хизболлах» боролись за вывод израильских войск из страны, а также за осуществление реформ в религиозно-конфессиональной системе, целью которых являлось уничтожение вышестоящих позиций христиан страны, в особенности маронитов.

В исследуемый период изучение друзского фактора в Ливане способствует также более правильному пониманию роли друзского руководителя Валида Джумблата и ПСП, а также внутри друзских противоречий в происходящих в стране процессах на настоящей стадии.

Диссертация состоит из введения, двух глав, из которых каждая соответственно состоит из подразделов, заключения и списка использованных источников и литературы.

В ВВЕДЕНИИ излагается актуальность, цели и проблемы темы диссертации, обосновывается теоретическое и практическое значение работы, дается краткий обзор использованной литературы и источников, методологическая основа и научное новаторство работы.

ПЕРВАЯ ГЛАВА диссертации - «РОЛЬ ДРУЗСКОЙ ОБЩИНЫ В ПОЛИТИЧЕСКИХ СОБЫТИЯХ ЛИВАНА (С 1920-ЫХ ПО 1975Г.)» посвящена исследованию роли друзов в общественно-политических событиях в Ливане в период с эпохи французского мандата до вспышки второй гражданской войны в стране (1975г.).

ВТОРАЯ ГЛАВА диссертации - «ДРУЗСКАЯ ОБЩИНА ЛИВАНА В ГОДЫ ВТОРОЙ ГРАЖДАНСКОЙ ВОЙНЫ (1975-1990Г.Г.)» включает исследование деятельности Прогрессивной социалистической партии, состоявшей в основном из друзов, а также друзской общины в эпоху второй гражданской войны, продолжавшейся в стране около 15-ти лет.

В ЗАКЛЮЧЕНИИ обобщаются основные результаты диссертации.

Melkonyan A. Artur

The Role of Druze Community in the Internal Political Developments of  
Lebanon (from 1920's to 1990)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the  
Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.00, on December 27,  
2012 at the Meeting of Specialized Council 006 "World History"  
acting at the Oriental Studies Institute of NAS RA.  
Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

SUMMARY

The Druze community plays its particular role in a number of ethno-confessional and religious communities living in the Middle East, including in Lebanon. The study of the role of the Druze community in internal political developments in Lebanon from 1920s to 1990 is not only of great scientific, but also political and practical importance.

Currently in the Middle East there are Druze communities in Lebanon, Syria, Israel and Jordan. For centuries the Druze communities were least of all exposed to changes, and they are considered one of the most secretive religious groups in the region. This is also the reason that the Druze religious teaching has been relatively little researched.

In the 11<sup>th</sup> century in Fatimit Egypt the followers of the Druze religious school originating from ismailism later settled in Syria and Lebanon, where they founded their settlements mainly in mountainous areas. In the course of time the Druze became one of the important components of ethno-religious structures of these countries. It is no mere chance that in the modern period this community has played its essential role in the struggle of Syrians and Lebanese against the French Mandate authorities, as well as in the internal political, cultural, social and social-economic processes of independent Syria and Lebanon.

In the period of studied activity of the Lebanese Druze community was mainly connected with the influential community leader Kamal Jumblatt, who was also the founder of the Progressive Socialist Party (PSP). Social political processes in Lebanon in the end of 1950s and in the 1960s intensified also the Druze community, which led by Kamal Jumblatt began the struggle for the extension of Druze authorities within the limits of the religious-confessional system.

The actuality of the above mentioned theme is also connected with the research of the Druze community during the civil war in Lebanon (1975-1990) and the PSP representing it, which was the main core of the left Lebanese forces, and Kamal Jumblatt was the leader of the «National Front». During the entire period of the continuous political crisis in Lebanon Kamal Jumblatt, and after 1977 also his son Walid Jumblatt together with Palestinian armed alignments, and later also with the Shiite movement «Amal» and «Hezbollah» struggled for the withdrawal of Israeli troops from the country and for implementation of reforms in the religious-confessional system, the aim of which was to eliminate superior position of the Christians in the country, particularly the Maronites.

In the period of research the study of the Druze factor in Lebanon also contributes to more accurate understanding of the role of Druze leader Walid Jumblatt and PSP, as well as internal Druze contradictions in the processes occurring in the country at this stage.

The dissertation consists of an introduction, two chapters, each of which respectively consists of subsections, conclusion and used sources and the list of literature.

In the INTRODUCTION it is talked of actuality, objectives and problems of the dissertation topics, the theoretical and practical value of the work is being substantiated, a brief review of the literature used and sources, methodological basis and scientific innovation of the work is given.

The FIRST CHAPTER of the dissertation is «ROLE OF THE DRUZE COMMUNITY IN THE POLITICAL DEVELOPMENTS OF LEBANON (from 1920s until the 1975)» devoted to the research of the Druze role in the social political developments in Lebanon in the epoch since the French mandate period till the outbreak of the second civil war in the country (1975).

The SECOND CHAPTER OF THE DISSERTATION IS «DRUZE COMMUNITY IN LEBANON DURING THE SECOND CIVIL WAR (1975-1990)» includes the research of the activities of the «Progressive Socialist» Party consisted mainly of the Druze and the Druze community in the period of the second civil war, which lasted about 15 years in the country.

The main results of the study are summarized in the CONCLUSION.